

ԱՐԱՔԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՏԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՊԻԿՅԱՆ ՍԻԼՎԱ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի ավագ գիտաշխատող
էլփոստ՝ papikyansilva@yandex.ru

Հայերենը անմիջական կամ միջնորդավորված բազմաթիվ փոխառություններ է կատարել արաբերենից, որոնց մի մասը ամրակայվել է լեզվում: Դրանց մեջ որոշակի քանակ են կազմում հայրկական փոխառությունները, որոնք օտար մշակույթը, իրերը, սովորությունները անվանող հասկացություններ են, և դրանց գործածությունը ապահովում է տվյալ ժողովրդի մշակույթի առանձնահատկությունների մասին պարկերացումները: Արաբական մշակույթը, որ ձևավորվել է Արաբական խալիֆայությունում 7-10-րդ դդ., ներառում է ինչպես արաբ ժողովրդի, այնպես էլ խալիֆայության մեջ մտնող ժողովուրդների, անտիկ մշակույթի տարրեր: Միջին դարերում բժշկագիտությանը, մաթեմատիկային, աստղագիտությանը վերաբերող շատ իրողություններ եվրոպացիները վերցրել են արաբներից: Բարձր մակարդակ է ունեցել նաև պոեզիան, իհարկե, մեծ ազդեցություն կրելով պարսկական պոեզիայից, որն իր ազդեցությունն է ունեցել տարածաշրջանի գեղարվեստական ստեղծագործությունների և աշխարհըմբռնման վրա¹: Արաբական ծագման հայրկական փոխառությունների մեջ որոշակի քանակ են կազմում մահմեդական կրոնին՝ իսլամին, վերաբերող բառերը: Հայերենի տառաչափության վրա նույնպես զգալի է արաբերենի դերը:

Հոգվածում քննվել են արաբական ծագման հայրկական փոխառությունները, որոնք դասկարգել ենք ըստ հետևյալ խմբերի՝ կրոնական, արվեստ-գրականություն, պեղական-կառավարական մարմիններ, հագուստ, ընդհանուր անվանումներ:

Բանալի բառեր¹ հայրկական փոխառություններ, իրույթներ, թարգմանական գրականություն, միջնորդավորված փոխառություններ, առարկայաթեմատիկ խումբ, արևելյան պոեզիա:

¹ Առանձին հոդվածով կանոնադրված Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չալենցի ստեղծագործություններում հանդիպող հատկական փոխառություններին:

Որևէ ժողովրդի պատմությունը ուսումնասիրելու կարևորագույն աղբյուր է նրա լեզուն, հատկապես բառապաշարը, որում արտացոլված են տվյալ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառները, միևնույն ժամանակ երևում են տվյալ էթնոսի պատմամշակութային կապերը ուրիշ ժողովուրդների հետ: Վ. Աբաևի կարծիքով՝ ժողովրդի և նրա լեզվի պատմությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ 1. լեզվի պատմությունից գնալ ժողովրդի պատմությանը, 2. ժողովրդի պատմությունից գնալ լեզվի պատմությանը՝ օգտագործելով ազգային պատմության տվյալները՝ բացատրելու փաստերը, գործընթացները, որ կատարվում են լեզվում:

Ինչպես ժողովուրդները չեն կարող ապրել միմյանցից մեկուսացած, այնպես էլ լեզուները չեն կարող չազդել միմյանց վրա, քանի որ փոխադարձ շփումների՝ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն, անհրաժեշտաբար կատարվում են փոխառություններ: Այդ փոխառությունները միատարր չեն: Կան փոխառություններ, որ կատարվել են փոխառու լեզվում նոր առարկան, երևույթը նշելու համար: Հնարավոր է, որ որոշ ժամանակ անց ստեղծվի այդ բառի համարժեքը, և դրանք կարող են որոշ ժամանակահատվածում գոյատևել կողք կողքի: Ի վերջո, հաղթում է դրանցից մեկը կամ ենթարկվում իմաստային տարբերակման:

Փոխառությունների մեջ առանձին շերտ են ներկայացնում հատկապես փոխառությունները²: Սրանք այն փոխառյալ բառերն են, որոնք ցույց են տալիս այս կամ այն ժողովրդին, երկրին հատուկ երևույթներ, սովորություններ, իրեր և այլն: Սովորաբար դրանք գործածվում են, երբ խոսքը վերաբերում է տվյալ ժողովրդին բնորոշ իրույթներին (ռեալիաներ):

Իրույթները միշտ վերաբերում են այն ժողովրդին, որտեղ դրանք ծագել են: Ի տարբերություն տերմինների, որոնք սովորաբար արտահայտում են գիտության, տեխնիկայի, մշակույթի որևէ բնագավառի վերաբերող հասկացություններ և ընդհանուր են շատ ժողովուրդների համար, հատկապես փոխառությունները մտնում են այլ լեզուների բառապաշար, որի լեզվակիր հանրույթը կարող է ընդհանրապես ծանոթ չլինել փոխառու ժողովրդի մշակույթին. հիմնականում դա տեղի է ունենում թարգմանական գրականության

¹ Абаев В. И., О принципах этимологического словаря, Вопросы языкознания, 1952, N 5, стр. 56-69.

² Տե՛ս Էդ Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984. էջ 169:

և զանգվածային լրատվության միջոցներով: Հատկական փոխառությունների ճակատագիրը տարբեր է լինում: Հաճախ դրանք ձեռք են բերում միջազգային տարածվածություն՝ այնուամենայնիվ պահպանելով որոշակի ազգային նրբերանգ, ինչպես՝ *բուդակ*, *սուլթան*, *շահ* և այլն: Տերմինները «ստեղծվում են» հիմնականում հունալատինական ծագումով արմատներով կամ եղած բառերի գիտակցված վերափոխմամբ փոխաբերացումներով, մինչդեռ հատկական փոխառությունները, կարելի է ասել, ժողովրդական բառեր են՝ առաջացած տվյալ ժողովրդի աշխարհայացքի, մշակույթի, կենցաղի հիման վրա:

Հատկական փոխառությունները կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ ըստ ծագման, ըստ առարկայաթեմատիկ խմբերի (կրոնական, սպորտաձև, պետական - կառավարման մարմին, դրամական միավոր, դիմելաձև, հագուստ, ազգային պարեր, կոչումներ, գրական ժանրեր, կերակրատեսակներ, խմիչք, կացարան, զենք և այլն), ըստ բառիմաստի փոփոխության, ըստ հաճախականության, ըստ ժամանակային հատկանիշի և այլն:

Այս հոդվածում մենք կանդրադառնանք հասարակական գիտություններում հանդիպող արաբական ծագման հատկական փոխառություններին: Ընդ որում, դրանց մի մասը հայերենին է անցել թուրքերենի կամ պարսկերենի միջնորդությամբ, այն է՝ միջնորդավորված փոխառություններ են: Մենք չենք առանձնացրել անմիջական և միջնորդավորված փոխառությունները, քանի որ շատ դեպքերում հնարավոր չէ ճշտել, թե դրանք անմիջապես արաբերենից են, թե՞ անցել են մեկ այլ լեզվի միջնորդությամբ:

Մեր բառացանկի արաբական ծագման հատկական փոխառությունները, որ հավաքել ենք տարբեր աղբյուրներից՝ բառարաններից, գրական ստեղծագործություններից, մամուլից, հնարավորություն է տալիս դրանք դասակարգելու ըստ հետևյալ խմբերի՝ կրոնական, արվեստ-գրականություն, պետական-կառավարական մարմիններ, հագուստ, այլ անվանումներ¹:

ա. կրոնական բառեր² *Ալլահ* «մահմեդականների աստծու անվանումը», *այաթուլա* (արաբ. *այաթ*՝ նշան, *ալ-իլահ*՝ աստված) «Իրանի մահմեդա-

¹ Բառերի բացատրությունները տրվել են ըստ գրականության ցանկում նշված բառարանների:

² Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում կրոնը մեծ դեր ունի: Այն ունի տարբեր գործառույթներ՝ աշխարհայացքային, կարգավորիչ, մշակութապահպան, նույնիսկ էթնոտարբերակիչ: 7-րդ դարի սկզբին Արաբական թերակղզում առաջացած նոր գաղափարախոսության՝ իսլամի (բառացի՝ հնազանդություն) դավանաբանական հիմնական աղբյուրները Ղուրանը և Սուննան են:

կանների հոգևոր առաջնորդը», *գլավուր* «անհավատ՝ մամեղականների կողմից քրիստոնյաներին տրվող արհամարհական անվանում», *զեհեպ* «մահմեդական կրոնավոր», *իբլիս* «սատանայի անվանումը մահմեդականության մեջ», *իմամ*՝ արաբ.՝ *առաջը կանգնած* «1.մահմեդականների հոգևոր առաջնորդ, 2. մզկիթների մոտ ընդհանուր աղոթքն ու արարողություններն անցկացնող մոլլա», *իսլամ*՝ արաբ.*հնազանդություն* «1. մահմեդական կրոնը. 2. մահմեդական կրոնը դավանող: 3. մահմեդականություն, մահմեդականների ամբողջությունը», *կուռա* «*Ղուրան կարդացող*» *հաջի* «1.պատվավոր տիտղոս մահմեդականության մեջ, որ տրվում է Մեքքա ուխտագնացություն կատարողին, 2. ուխտագնացություն կատարած անձ», *հեճ* «ուխտագնացություն», *Ղուրան*՝ արաբ. *ընթերցվածք* «մահմեդականների Սուրբ գիրքը»¹, *մալում* «մահմեդական կրոնի կարդացող, ուսուցիչ, իմամ», *ճեմիա* «մզկիթ» *մամբար* «մզկիթի բեմ», *մահպետի* «Երուսաղեմ ուխտի գնացած», *մեդրեսե* «կրոնական միջնակարգ դպրոց՝ մահմեդականների համար», *մզկիթ* «մահմեդականների աղոթատեղի», *մինարեթ*՝ արաբ.՝ *փարոս*՝ «մզկիթի բարձր աշտարակ, որտեղից մոեձինը կանչում է մահմեդականներին աղոթքի» *մոլլա* «մահմեդական կրոնավոր», *մոեձին* «մահմեդականներին աղոթքի կանչող մզկիթի սպասավոր», *մուդրի*՝ «*Ղուրան կարդացող մահմեդական կրոնավոր*», *մուֆտի* «մահմեդական բարձրաստիճան հոգևորական իրավաբան-կրոնագետ և Ղուրանի մեկնաբան, որը սովորաբար գլխավոր դատավորի դեր է կատարում եկեղեցական-իրավական գործերի քննության ժամանակ», *նալաթ* «անեծք», *շարիաթ/շիրիաթ*՝ արաբ. *օրենք*՝ «մահմեդական երկրներում՝ դատաստանական՝ քաղաքացիական և կրոնական օրենքների ժողովածու, որ հիմնված է Ղուրանի վրա», *շեյթան* «մահմեդական դիցաբանության մեջ՝ չար ոգի, դև», *շիա* «մահմեդական կրոնական ուղղություն, որն ընդունում է միայն Ղուրանը և մերժում է ավանդությունները՝ սուննաները», *ջիհադ*՝ բառացի՝ *եռանդ*՝ «սրբազան պատերազմ, որ, ըստ Ղուրանի որոշ դրույթների, մահմեդականները պետք է մղեն անհավատների դեմ», *ջին* «բարի և չար ոգիների անվանումը արաբական և պարսկական դիցաբանության մեջ», *ռամազան* «մահմեդականների լուսնային օրացույցի իններորդ ամիսը, որի ժամանակ նրանք խիստ պաս են պահում», *ռաշիդ*՝ արաբ.՝ *ուղղափառ* «մակդիր առաջին 4 խալիֆների», *ռասուլ*՝ արաբ. *մարգարե* «մահ-

¹ Այն մարգարե Մուհամեդի քարոզների հավաքածուն է՝ բաղկացած կրոնադավանաբանական, ծիսական, կենցաղային պատվիրաններից, խրատներից, առակներից: Ղուրանը համաշխարհային գրականության մեծարժեք ստեղծագործություն է:

մեղականների գլխավոր մարգարեն՝ Մուհամեդը, որ համարվում է աստծո մարգարե», *սեիր* «1.Մուհամեդի հաջորդների տիտղոսը: 2.որոշ մահմեդական երկրներում՝ երկրի կառավարչի տիտղոսը», *սուննա* արաբ.՝ *սովորույթ, ավանդույթ*՝ «Մուհամեդ մարգարեին վերագրվող խոսքեր, որոնք չկան Ղուրանում, որոնց Ղուրանին հավասար հետևում են սուննի մահմեդականները», *սուննի*՝ «Ղուրանի հետ նաև սուննաները՝ ավանդությունները ընդունող մահմեդական», *ֆակիր* «1. դերվիշ: 2. թափառական ձեռնաձուլ»:

բ. արվեստ-գրականություն՝ այլաթ՝ «բանաստեղծական տուն Ղուրանում», *աշուղ*² արաբ. *սիրահարված*՝ «ինքնուս ժողովրդական երգիչ-բանաստեղծ», *բայաթի* «արևելքի ժողովրդական պոեզիայում տարածված յոթականի քառատող բանաստեղծություն, որը կատարվում է տխուր նվագի ուղեկցությամբ», *բեյթ* «արևելյան պոեզիայում բանաստեղծական տան տեսակ, որն ունի երկու տող և համեմատաբար ավարտուն իմաստ. երկտող բանաստեղծություն», *գազել* «արևելյան քնարերգության մեջ մշակված երկտող տներով ոտանավոր, որոնք միահյուսվում են ամեն զույգ տողի վերջում կրկնվող հանգավորումով», *թամաշա* «խաղ, տեսարան», *մասխարա* «ծիծաղաշարժ», *կաֆա* «բանաստեղծական ձև հայ միջնադարյան գրականության մեջ. առանձին չափածո հատվածներ, որ ներմուծվում էին արձակ պատմությունների մեջ՝ կապվելով սյուժեի հետ», *մուխամմազ* «արևելքի պոեզիայում տարածված բանաստեղծության տեսակ, որոնց տները բաղկացած են 5-ական տողերից. գործածվել է հայ գուսանական պոեզիայում», *մուղամ* «արևելյան երաժշտական տխուր մեղեդի», *մունետրիկ* «կանչող», *շեր* «երգ, բանաստեղծություն», *ռեդիֆ* «արևելյան ժողովուրդների պոեզիայում լայնորեն տարածված հնարանք՝ մեկ կամ մի քանի բառերի կրկնությունը տողերի վերջում. այն գործածվում է *գազել*, *ռուբայի*, *մուխամմազ* բանաստեղծությունների մեջ», *ռուբայի (հոգն. ռուբայաթ)* «արևելյան պոեզիայում տարածված քառատող բանաստեղծություն³. սովորաբար հանգավորվում են առաջին, երկրորդ և չորրորդ տողերը», *սուրահ* «գրական ստեղծագործության մաս՝ գլուխ. այդպես են կոչվում Ղուրանի մասերը», *քասիդ* «արևելյան պոեզիա-

¹ Մի քանի այլաթը կազմում է գլուխ՝ սուրահ, որ Ղուրանում 114-ն են, այլաթները՝ 6206:

² *Աշուղները* նաև երգահաններ էին, երգիչ-կատարողներ: Հայ գրականության մեջ հայտնի աշուղներ են Սալաթ-Նովան, Ջիվանին: Այժմ ինքնուս երգահան-կատարողներին անվանում են *գուսան*:

³ Ե. Չարենցի ռուբայիներից՝ *Դու մի օր աչքերդ կփակես, որ ուրիշը քո տեղ գոյանա, Կգնաս, կանցնես աշխարհից, որ ուրիշը քո տեղ գոյանա, -Այն դու՝ ես, իմաստուն, այո դու,- բայց արդեն դարձած մի ուրիշ, Հասարպետ, ժխտելով նա քեզ, որ ուրիշը քո տեղ գոյանա:*

յում տարածված ոտանավորի ձև՝ բաղկացած երկուտողանի տներից՝ բեյթերից. նման է գագելին, բայց երկար է. կարող է ունենալ շատ բեյթեր»:

Միջին հայերենի շրջանում կատարված ժողովրդական փոխառություններ են *թամաշա*, *մասխարա*, *շեր* բառերը, որ պահպանվել են բարբառներում:

գ. պետական-կառավարական մարմիններ՝ *ամիր/ամիրա՝* արաբ.՝ *հրամանատար* «1.արաբական իշխանության կողմից նշանակված կռակավ կամ որևէ նահանգի կառավարիչ, անկախ իշխան: 2. Կ. Պոլսում՝ հարգական տիտղոս բարձրաստիճան հայերի, որոնք Ազգային Սահմանադրությունից առաջ կարգադրում էին ազգի գործերը», *ամիրսպասալար՝* «մեծ զորավար», *խալիֆա*

(հայերենում բառը բազմիամատ է). «1.արաբների ամիրապետի տիտղոսը, 2.մահմեդականների գերագույն գլխավորը, որ համատեղում էր հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, 3. եգիպտական, հետո թուրքական սուլթանի՝ որպես մահմեդականների հոգևոր առաջնորդի տիտղոսը», *շեյխ* արաբ.՝ *ծերունի, ցեղապետ* «1.արաբների մոտ՝ ցեղապետ: 2 կրոն. մահմեդական հոգևորականության առաջնորդ, աստվածաբան», *ռայիս/ ռես՝* արաբ. *գլխավոր* «գյուղի, ցեղի գլխավոր, պետ», *սուլթան* «մահմեդական երկրներում՝ միապետի ժառանգական տիտղոս, ինչպես և այդ տիտղոսը կրող անձը»:

դ. հագուստ՝ *աբայա* «մահմեդական կանանց հագուստ՝ երկար թևերով, *հիջաբ՝* արաբ.՝ *ծածկոց՝* «մահմեդական կանանց հագուստ, որ ոտքից մինչև գլուխ ծածկում է նրանց մարմինը, նեղ իմաստով՝ արաբական գլխաշոր», *կապա* «առջևը բաց շոր, պարեգոտ», *նիքաբ/նիկաբ* «գլխաշորի տեսակ, որը կապելիս բաց է թողնվում միայն աչքերի հատվածը»:

ե. ընդհանուր անվանումներ՝ *ադաթ* «սովորություն», *հարեմ* արաբ. *արգելված՝* «կանանոց», *խիկար* «իմաստուն», *հիջրեթ/հիջրա՝* արաբ. *փախուսք*. «622 թ. Մուհամեդի փախուստը Մեքքայից Մեդինե, որից սկսվում է մահմեդական թվականության համակարգը», *փարսախ* «չափման միավոր»:

Ամփոփելով վերաշարադրյալը՝ կարող ենք արձանագրել, որ հայերենում հանդիպող արաբական ծագման հատկական փոխառությունների մեջ կրոնական բնույթի¹ բառերը շատ են, որ բացատրվում է Ղուրանի՝ մահմե-

¹ Կրոնին վերաբերող բառապաշարը խորհրդային տարիներին անտեսվել է. դա վերաբերում է ինչպես քրիստոնեությանը, այնպես էլ մահմեդականությանը: Էդ. Աղայանն իր բառարանի առաջա-

դականների Սուրբ գրքի և իսլամի ազդեցությամբ շրջակա ժողովուրդների վրա: Դրանց մեջ կան ոչ հաճախական բառեր, ինչպես՝ *մամբար* «մզկիթի բեմ», *զեհեդ* «մահմեդական կրոնավոր», *մալում* «մահմեդական կրոնի կարգացող, ուսուցիչ, իմամ», *տլսիմ* «կախարդանք»: Որոշակի քանակ են կազմում տաղաչափությանը վերաբերող բառերը, պետական-կառավարական մարմինների անվանումները:

Շրջապատված լինելով մահմեդականություն դավանող ժողովուրդներով՝ հայերս պետք է հնարավորինս ծանոթանանք նրանց կրոնին, մշակույթին և սովորություններին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ. Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ.1-4, Ե., 1971-1979:
3. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, հ.2, Ե., 1951:
4. Հայրապետյան Ա. Օտար բառերի բառարան, Ե., 2011:
5. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944-1945:
6. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:
7. Զրբաշյան Էդ., Մախսանյան Հ., Գրականագիտական բառարան, Ե., 1972:
8. Абаев В. И., О принципах этимологического словаря, Вопросы языкознания, 1952, N 5:
9. Словарь иностранных слов, М., 1949:
10. Словарь литературоведческих терминов, М., 1974:
11. Ожегов С., Словарь русского языка, М., 1970:

բանում գրում է, որ բառարան չեն ներմուծվել «կրոնական և եկեղեցական բառերի մեծագույն մասը, որոնց իմացումը, հեղինակի կարծիքով, այսօրվա մասսայական ընթերցողին անհրաժեշտ չէ»: Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Առաջաբան, xlii: Խոսքը խորհրդային ընթերցողի մասին է: Մինչդեռ Ստ. Մալխասյանցը իր բառարանում զետեղել է բազմաթիվ կրոնական բառեր, նշելով, որ շատ բառեր ոչ միայն փոխել են իրենց սկզբնական նշանակությունը, այլև կերպարանափոխվել են, մանավանդ կրոնական նշանակություն ունեցող բառերը, սակայն բառարանագիրը պետք է հավատարիմ մնա իր կոչմանը և տա բառերի ճիշտ նշանակությունները, որ նրանք ունեցել են ստեղծվելիս՝ անկախ այն բանից, թե հեղինակը հավատում է կամ չի հավատում այդ նշանակություններին կամ ներկայումս ընդունելի են թե ոչ: Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Առաջաբան, ԺԵ:



EXAMINATION OF EXOTICISMS OF ARABIC ORIGIN

PAPIKYAN SILVA

PhD in Philology

Researcher at the Language Institute after

Hr. Acharyan, NAS, RA

e-mail: papikyansilva@yandex.ru

The Armenian language has made many direct or indirect borrowings from Arabic language, some of which have been enrooted in the language. Among them there are a certain number of exoticisms, which are concepts that call foreign culture, objects, customs, and their usage provides insights into the cultural peculiarities of that nation. Arab culture, which originated in the Arab Caliphate in the 7th-10th centuries, includes elements of the ancient culture of both the Arab people and the nations within the Caliphate. In the Middle Ages, Europeans adopted many concepts about medicine, mathematics and astronomy from the Arabs. Poetry was at high level, of course, being greatly influenced by Persian poetry, which made an impact on artworks and worldview within the region. The exoticisms of Arabic origin examined in the article are classified into the following groups: religion, art-literature, state-governmental bodies, clothing and common names.

Key words: *exoticisms, realia, translated literature, direct and mediated borrowings, thematic group, Eastern poetry.*

ИССЛЕДОВАНИЕ ЭКЗОТИЗМОВ АРАБСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

ПАПИКЯН СИЛЬВА

*Кандидат филологических наук, доцент,
Старший научный сотрудник Института
языка имени Р. Ачаряна НАН РА*
электронная почта: papikyansilva@yandex.ru

В армянском языке существует много прямых или косвенных заимствований из арабского языка, некоторые из которых укоренились в языке. Среди них есть определенное количество экзотизмов, которые являются понятиями, служащими для передачи иностранной культуры, предметов и привычек, и их использование позволяет понять культурные особенности данной нации. Арабская культура, зародившаяся в Арабском халифате в VII-X веках, включает в себя элементы древней культуры как арабского народа, так и народов, входящих в Халифат. В средние века европейцы переняли у арабов многие концепции в сферах медицины, математики и астрономии. Поэзия была на высоком уровне, и, конечно, на нее большое влияние оказала персидская поэзия, которая оказала влияние на произведения искусства и мировоззрение в регионе. Рассмотренные в статье экзотизмы арабского происхождения подразделяются на следующие группы: религия, искусство – литература, государственные органы – органы управления, одежда и общепринятые названия.

Ключевые слова: экзотизмы, реалии, переводная литература, прямые и опосредованные заимствования, предметно-тематическая группа, восточная поэзия.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 28.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 22.09.2021թ.: